ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

ԻՆՉ Է ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ?

Թմբկաթաղանթի հետևում գտնվող տարածությունը կոչվում է միջին ականջ: Այն հաղորդակցվում է ըմպանային տարածության հետ: Բորբոքման ժամանակ այս տարածությունը լցվում է հեղուկով և առաջացնում է ցավ՝ թմբկաթաղանթի լարվածության և բորբոքման միջոցով: Հազվադեպ դեպքերում թմբկաթաղանթը կարող է պատռվել մեծ լարվածությունից և թարախը կարող է հոսել ականջից դուրս:
Հատուկ գործիքով /օտոսկոպով/ բժիշկը կարող է տեսնել թմբկաթաղանթի արտափքումը և ախտորոշել միջին ականջի բորբոքումը:

ՈՐՈՆՔ ԵՆ ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ ՊԱՐՃԱՌՆԵՐԸ?

Միջին ականջի բորբոքում առաջացնում են վիրուսները կամ բակտերիաները: Երեխան հաճախ միաժամանակ ունենում է հարբուխ՝ քթային դժվարաշնչությամբ:

ԻՆՉՊԵՍ Է ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ?

Մեծ երեխաները գանգատվում են ականջացավից: Փոքր երեխաները բռնում և քաշում են իրենց ականջը: Միաժամանակ կարող են լինել տենդ, լուծ, կամ փսխում: Եթե առկա է թարախի արտահոսք ականջից, նշանակում է՝ թմբկաթաղանթը պատռվել է:
Վերջինս հաճախ բերում է ցավի պակասման:

ԻՆՉՊԵՍ Է ԲՈՒԺՎՈՒՄ ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ?

Մեծ մաս դեպքերում միջին ականջի բորբոքումը անցնում է ինքնուրույն, և հիվանդության սկզբում պատշաճ ցավազրկումը լրիվ բավարար է / Պարացետամոլ, Իբուպրոֆեն, Դիկլոն/: Կարող են լրացուցիչ օգտագործվել նաև քթի կաթիլներ: Այնուհետև 1-3 օր անց երկրորդ զննման ժամանակ /փոքր երեխաներին ավելի շուտ/ կարող է որոշում կայացվել՝ արդյոք անհրաժեշտ են անտիբիոտիկներ, թե ոչ: Հակաբակտերիալ բուժումն անմիջապես պետք է սկսել, եթե առկա է թմբկաթաղանթի պատռում՝ թարախի արտահոսքով:

ՈՐՈՆՔ ԵՆ ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ?

Միջին ակնջի բորբոքումը նորմայում համարվում է հեշտ բուժվող հիվանդություն: Թմբկաթաղանթի պատռումը սովորաբար անցնում է առանց հետևանքների: Այնուամենայնիվ, հազվադեպ կարող են առաջանալ նաև լուրջ բարդություններ, ինչպիսիք են՝ ոսկրի բորբոքումը, մենինգիտը, ուստի կարևոր է, որ հետևողականորեն կատարվեն բժշկի կողմից նշանակված բուժումները:
Հեղուկը կարող է մնալ միջին ականջում բորբոքումից հետո երկար ժամանակ: Արդյունքում երեխաների լսողությունը իջնում է: Եթե 6-8 շաբաթ անց ձեր երեխան թվում է թե վատ է լսում կամ գրգռված է, խորհրդակցեք մանկաբույժի հետ:

ԻՆՉ ԱՆԵԼ ԱԿԱՆՋԻ ՑԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ?

Եթե ձեր երեխան գանգատվում է ականջի ցավից, նպատակահարմար է օգտագործել ցավազրկողներ: Բժշկին դիմելը անհրաժեշտ է, բայց ոչ հրատապ, բացառության հետևյալ դեպքերի՝

- Անընդհատ ցավ
- Երեխան թույլ է անկախ ցավազրկումից
- Անզուսպ փսխումներ
- Գլխացավեր անկախ ցավազրկումից
- Ականջի շուրջը այտուցի զարգացումը

ARABKIR
JOINT MEDICAL CENTRE
ԱՐԱԲԿԻՐ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
Mamikoninants str. 30, Yerevan, 375014 Armenia
Tel.: (374 1) 236 883, Fax: (374 1) 284 170, E-mail: aramc@arminco.com